

ՍԵՎԱԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ

ՀՀ ԳԱԹԵՐԱԿԻՅԱՆ ՄԵԴԻԱ

Լուրն անսահման ուրախալի էր, ցնծություն պարզապես: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սևակ Արզումանյանը ընտրվել է ՀՀ ԳԱԹ Թղթակից անդամ, մեզ համար ակադեմիկոս:

Նա իրավամբ նվաճեց Ազգային Ակադեմիայում այն տեղը, որին հասել էր երկար տարիների համառ աշխատանքով և վիթխարի վաստակով:

Սևակ Արզումանյանը, որպես գրականագիտական ուրույն մտածողության կրող, իրեն դոստոյևս է դեռնում ուսանողական տարիներին, երբ գերազանց առաջադիմությամբ սովորում էր ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում: Նա ընդամենը երկու տարվա ընթացքում պատրաստեց իր թեկնածուական թեզը և արդեն 25 տարեկանում բանասիրական գիտությունների թեկնածու էր և գրական կյանքի մեջ եռանդուն մասնակցություն ունեցող անհատ: Սևակ Արզումանյանին գրականագիտական հետաքրքրությունների մեծագույն մասը կապվում է հայ գրականության նոր և նորագույն շրջաններին, արևմտահայ և արևելահայ հատվածներին, սփյուռքահայ գրականությանը: Նա նախանձելի աշխատասիրություն ունի և սուր ու ճկուն միտք, հրաշալի հիշողություն, տեսական ընդհանրացումներ կատարելու մեծ կարողություն: Անդրանիկ մենագրությունը «Վահան Թոթովենց» էր (1961 թ.), որին հաջորդեցին բազմաթիվ նորերը: Սրաթիվ միտք ունի և արագագիր գրիչ. դա երևում է «Ձապել Եսայան» (կյանքը և գործը) մենագրության և իր ողջ գրականագիտական վաստակի մեջ: Կոթողային կարելի է համարել քառահատոր և սովորածավալ «Խորհրդահայ վեպի» չորս հատորները:

Նա մասնակցել է ակադեմիական հայ գրականության հատորների շարադրման աշխատանքներին: Որտեղ էլ աշխատել է Սևակ Արզումանյանը, հանդես է եկել իր ավանգարդային մտածողությամբ, ժամանակին համահունչ լինելու բացառիկ կարողությամբ:

Վերջին տարիները շատ բեղուն էին նրա գրչի համար: Նա գրել է «Հայ բանաստեղծության ազգային հոլը» ծավալուն մենագրությունը, հատուկ գիրք է նվիրել Վահրամ Հաճյանի պոեզիային, մի հիանալի գիրք է գրել «Հունորի ասպետը» խորագրով, որի մեջ առաջին անգամ համակողմանի ներկայացվել է Ժորա Հարությունյանի դրամատիկական ողջ վաստակը: Ունի ինքնակենսագրական բնույթի վիպակ, շարադրված մի շարք գործեր, որոնք անշուշտ լույս կտեսնեն մոտ ժամանակում: Որպես գրականագետ՝ նա մասնակից է եղել Հայաստանի գրադարձարարական կյանքին: «Սովետական գրականություն» հանդեսում և «Հայաստան» հրատարակչությունում վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ: Սակայն, հավանաբար, նա իր խառնվածքով մոտ է երիտասարդությանը, դրա համար էլ 1968-1978 թթ. եղել է Լենինականի Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայ գրականության ամբիոնի վարիչ, ապա բանասիրական ֆակուլտետի դեկան: Իսկ 1978-ից առ այսօր նա հայ գրականություն է դասավանդում Խ. Աբովյանի անվան ՀԳՄՀ-ում՝ միաժամանակ գլխավորելով «Վիլյամ Սարոյան» համալսարանը: Սևակ Արզումանյանը ՀՀ ԳԱԹ Մ. Աբովյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտացված խորհրդի անդամ է, ղեկավարել է քսաներկուսից ավելի ասպիրանտների, որոնք բոլորն էլ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական: Իսկ որքան անգամներ եղել է ընդդիմախոս թե՛ պաշտոնական պաշտպանությունների ժամանակ և թե՛ պարբերական մամուլի էջերում, ուր հանդես է եկել սկզբունքային գրաքննադատական հոդվածներով: Երկար տարիներ է, ինչ նա նաև Հայաստանի գրողների միության եռանդուն անդամներից մեկն է:

Տաղանդավոր գրականագետը նաև տաղանդավոր կենսասեր է, նա օրվա ընթացքում հասցնում է անել այն, ինչ ուրիշները կատարում են գուցե ամսվա ընթացքում:

Սրտանց շնորհավորում ենք նորընծա ակադեմիկոսին, ցանկանում քաջառողջություն և երկարատև կյանք: Սպասում ենք նրա նոր ստեղծագործություններին:

ՄՐՏԱՆՑ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԱՍ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱԿԱՆԴԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱԿԱՆԴԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ
«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ»
ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ